

ՀՄՀ – 2725
13 մայիսի 2010թ.

«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Շահառուների խորհրդի ընտրությունների
Ընտրական հանձնաժողովի նախագահ
Ա. Սարիբեկյանին և քարտուղար Մ. Եղիազարյանին

Պատճեն՝
ՀՀ Էկոնոմիկայի նախարար,
«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ Հայաստան» ծրագրի՝
Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ՝
պարոն Ներսես Երիցյանին

Հարգելի պարոն Սարիբեկյան,
Հարգելի տիկին Եղիազարյան,

Կիսելով Շահառուների խորհրդի առաջիկա ընտրությունների ընտրական հանձնաժողովում ստեղծված իրավիճակի կապակցությամբ ձեր մտահոգությունը՝ ներկայացնում եմ ՀՄՀ-Հայաստանի դիրքորոշումն այդ հարցի շուրջ և հույս ունեմ, որ այն կօգնի հաղթահարելու առկա խոչընդոտները: «ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի և Կառավարման խորհրդի անդամների ընտրությունների» կարգով ընտրական հանձնաժողովի համար նախատեսվել են լայն լիազորություններ՝ ինչ-որ չափով վերջինիս վերագրելով այս գործընթացում քաղաքացիական հասարակությունը ներկայացնելու գործառույթը: Ընտրական հանձնաժողովը կամավոր մարմին է, և տրամաբանական է ակնկալել, որ դրանում ներգրավվելու ցանկություն հայտնած անձիք պետք է լիարժեքորեն մասնակցեն հանձնաժողովի աշխատանքներին: Ինքնաառաջադրված բոլոր 13 թեկնածուներին հնարավորություն է տրվել անդամակցել հանձնաժողովին, և նրանք բոլորն էլ պատրաստակամություն են հայտնել իրենց վրա վերցնել ընտրական հանձնաժողովի անդամի գործառույթները՝ ստորագրելով համապատասխան ձևաթերթիկ: Ստեղծված իրավիճակը վկայում է այն մասին, որ հանձնաժողովի որոշ անդամներ չեն կարող կամ չեն ցանկանում պատշաճորեն իրականացնել իրենց պարտականությունները:

Այս հանգամանքներում Ընտրական հանձնաժողովը ազատ է ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կերաշխավորեն հանձնաժողովի բնականոն աշխատանքները, ինչպես նաև Շահառուների խորհրդի ընտրության ամբողջ գործընթացի նորմալ ընթացքը: Ես, որպես ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն, հավաստիացնում եմ ձեզ, որ ծրագրի շահերից է բխում այս ամբողջ գործընթացի անխափան իրականացումը:

Գլխավոր գործադիր տնօրեն՝

Արա Հովսեփյան